



Կեդրոնական վարչություն

Համազգայինի պատուիրակությունը մասնակցեցաւ Հայաստան-Սփիոք Համահայկական 6-րդ համաժողովին



18-21 Սեպտեմբեր 2017-ին, Երևանի մէջ կայացաւ Հայաստան-Սփիոք համահայկական 6-րդ համաժողովը, որուն իր մասնակցութիւնը բերաւ Համազգայինի հայ կրթական և մշակութային միութիւնը, Կեդրոնական Վարչութեան ատենապետ ընկեր ղոկտոր Մկրտիչ Մկրտիչեանի ելոյթով: >>>

Կեդրոնական Վարչութեան 2014-2018 քառամեակի Դ լիակազմ ժողով



23, 24 և 25 Սեպտեմբեր 2017-ին, Երևանի մէջ գումարուեցաւ Համազգայինի Կեդրոնական վարչութեան 2014-2018 քառամեակի 4-րդ լիակազմ ժողովը: >>>

Հարցազրոյց Համազգայինի Կեդրոնական վարչութեան ատենապետ ղոկտ. Մկրտիչ Մկրտիչեանի հետ



Համազգայինի Կեդրոնական վարչութեան 2014-2018 քառամեակի 4-րդ լիակազմ ժողովը առիթ հանդիսացաւ լուսարձակի տակ առնելու կատարուածները, արժևորումներ կատարելու և ուղենշելու հետագայ ծրագիրները՝ տարբեր բնագաւառներու վերաբերող: Այս բոլորին մասին, ինչպէս նաև

Հայաստան-Սփիոք 6-րդ խորհրդածողովին մասին յաւելեալ տեղեկութիւններ ու տպատրութիւններ ունենալու նպատակով «Ազդակ» հարցազրոյց մը կատարեց Համազգայինի Կեդրոնական վարչութեան ատենապետ ղոկտ. Մկրտիչ Մկրտիչեանին հետ: >>>

Համազգայինի Կեդրոնական վարչութեան անդամներ այցելեցին Սփիոքի նախարար Տիկին Հրանտշ Յակոբեանին



27 Սեպտեմբեր 2017-ին, Հայաստանի Սփիոքի նախարար Հրանտշ Յակոբեան ընդունեց Համազգայինի հայ կրթական և մշակութային միութեան Կեդրոնական վարչութեան պատուիրակութիւնը, որուն մաս կը կազմէին ատենապետ Մկրտիչ Մկրտիչեան (Լիբանան), անդամներ Կարապետ Պայթարեան (Լիբանան), Կարո Մանճիկեան (Մուրիա), Վիգէն Թիֆէնքճեան (Գանատա), Համազգայինի հիմնադրամի Խորհուրդի նախագահ, Կեդրոնական վարչութեան անդամ Սպարտակ Ղարաբաղցեան և Հայաստանի գրասենեակի տնօրէն Նարէ Միքայէլեան: >>>

Լուսին Շիրինեան-Պէլքըր 40,000 տոլար կը նուիրէ Ճեմարանին և 10,000՝ «Ասպարէզ»ին



Երբ Լուսին Շիրինեան-Պէլքըր Համազգայինին կատարեց իր նուիրատուութիւնը, ան ըսաւ Պրն. Արօ Պողիկեանին.- «Հիմա կ'ուզեմ ինծի օգնես: Կ'ուզեմ 40,000 տոլար նուիրել իմ դպրոցին՝ Պէլքրոյի Ճեմարանին, ի յիշատակ իմ պաշտելի ուսուցիչներու՝ Լևոն Շանթին, Կարօ Սասունիին, Բարսեղ Կանաչեանին և այդ սերունդի բոլոր մեծերուն, որոնց շունչին տակ ես մեծցայ»: >>>

Համազգայինի հիմնադրամներու հաղորդագրութիւն



Համազգայինի հիմնադրամներու կառոյցի մարմինը, քննելէ ետք Համազգայինի հիմնադրամներու 2015 և 2016 տարիներու գործառնութիւնը, ինչպէս նաև կատարուելիք յատկացումները, այսու մեր հասարակութեան կը տեղեկացնէ, որ Համազգայինի Կեդրոնական վարչութեան հետ համախորհուրդ, 2015 և 2016 տարիներու հիմնադրամներու եկամուտներէն կատարած է հետևեալ յատկացումները, ըստ հիմնադրամներու կանոնագրութիւններով սահմանուած տրամադրութիւններուն: >>>

«Լալան ու Արան» մանկական դաստիարակչական խաղերու ծրագիրներ



Համազգային Հայ Կրթական և Մշակութային Միութեան Կեդրոնական Վարչութեան նախաձեռնած «Լալան ու Արան» մանկական դաստիարակչական խաղերը կը շարունակեն խանդավառութիւն ստեղծել իրենց շուրջ: iOS և Android գործիքներուն համար նախատեսուած այս խաղերը ձրիօրէն տրամադրելու նպատակով, Կեդրոնական Վարչութիւնը կազմակերպած էր մէկ ամսուան տևողութեամբ առցանց հանգանակութիւն մը, որ ւարստեցաւ ատելի քան 14,000 ամ. տոլարի գոյացումով: >>>

«Արցախի մէջ պետականութեան վերահաստատում (1917 Դեկտեմբեր – 1918 Յուլիս). Պատմագիտական և քաղաքագիտական հայեցակէտեր» գիտաժողով



20 Ապրիլ 2018-ին, Համազգային հայ կրթական և մշակութային միութիւնը և Արցախի Պետական Համալսարանը կը կազմակերպէին գիտաժողով մը, նուիրուած Արցախի մէջ պետականութեան վերահաստատման գործընթացի 100-ամեակին: >>>

«Կրթամշակութային կեանքը Հայաստանի առաջին հանրապետութեան տարիներին» միջազգային գիտաժողով



2018 թ. Մայիսի 15-16-ին, ԵՊՀ գիտական խորհրդի նիստերի դահլիճում տեղի է ունենալու «Կրթամշակութային կեանքը Հայաստանի առաջին Հանրապետութեան տարիներին» խորագրով գիտաժողով՝ նուիրուած Հայաստանի առաջին Հանրապետութեան 100-ամեակին և Համազգային հայ կրթական և մշակութային միութեան հիմնադրման 90-ամեակին: >>>



Համազգայինի Կեդրոնական Վարչութեան կազմակերպած տարեկան ուսանողական հաւաքը (Ֆորում) այս տարի ևս կայացաւ Հայաստանի և Արցախի մէջ, 8-21 Յուլիսին: Հաւաքին կը մասնակցէին 9 երկիրներէ 33 ուսանողներ:

Համազգայինի ուսանողական հաւաքի ծրագիրը բաղկացած է երեք հիմնական բաժիններէ. առաջին՝ զբօսաշրջական, երկրորդ՝ այցելութիւն այնպիսի վայրեր, ուր պարզ զբօսաշրջիկի մը արտօնութիւն չի տրուիր երթալ, ինչպէս՝ գօրամաս, պետական համալսարան, խորհրդարան, մանկատուն, երրորդ՝ խմբային աշխատանքի դրութիւն: Ասոնց զուգահեռ կը գործադրուի նաև դաստիարակչական ծրագիր: >>>


ԲԱԳԻՆ

ԼՈՅՍ ՏԵՄԱՆ



«Բագին» Ապրիլ-Յունիս 2017 (ԾԶ. ՏԱՐԻ, ԹԻԻ 2)

Գրութիւններ ունին Զաւէն Պիպեռեան, Յարութիւն Քիրքճեան, Յարութիւն Պերպերեան, Ճէսի Արլէն, Խաչիկ Տէր Ղուկասեան, Խաչիկ Տէտէեան, Վարդան Մատթէոսեան, Դալար Շահինեան, Բաֆֆի Աճէմեան և Անահիտ Տէր Մինասեան: >>>



«Բագին» Յուլիս-Սեպտեմբեր 2017 (ԾԶ. ՏԱՐԻ, ԹԻԻ 3)

Գրութիւններ ունին Վահէ Օշական, Կարէն Զալլաթեան, Բաֆֆի Աճէմեան, Անահիտ Մարգիսեան, Յարութիւն Պերպերեան, Ճէսի Արլէն, Մարուշ Երամեան, Խաչիկ Տէր Ղուկասեան, Միհրան Մինասեան, Վարդան Մատթէոսեան և Կարօ Յովհաննէսեան: >>>

«Բագին» գրական հանդէսի 55-ամեակին նուիրուած երեկոյ Երևանի մէջ



«Բագին»-ի 55-ամեայ յորելեանը հայրենիքի մէջ նշուեցաւ 22 Սեպտեմբեր 2018-ին՝ «Ակումբ» սրահին մէջ զրոյց-քննարկումով, որուն ներկայ էին «Բագին»-ի խմբագիրը, խմբագրական խորհուրդէն և Համազգայինի Կեդրոնական վարչութեան կազմէն անդամներ, ինչպէս նաև մտատրականներ և մշակութասէրներ: «Բագին»-ի անդրանիկ թիւը լոյս տեսած է 1962-ին Պէյրութի մէջ՝ խմբագրութեամբ Կարօ Սասունիի: Յաջորդող տասնամեակներուն, ամսագրի խմբագիրները եղած են՝ Եղուարդ Պոյաճեան, Պօղոս Մնասեան և Յակոբ Պալեան, իսկ 2016-ին այդ պատասխանատուութիւնը ստանձնեց երիտասարդ զրոյց, մանկավարժ Սոնիա Քիլիճեան-Աճէմեանը: >>>

Նիու Ճրրգիի մէջ կայացաւ «Բագին»ի ներկայացման ձեռնարկ



Համազգայինի Նիու Ճրրգիի մասնաճիւղը Հինգշաբթի 26 Հոկտեմբեր 2017-ին կազմակերպած էր «Բագին»-ի ներկայացման և պարբերաբերթի հրատարակութեան 55-րդ տարեդարձի տօնակատարութեան ձեռնարկ մը, որ տեղի ունեցաւ Նիու Ճրրգիի «Յովհաննէսեան» վարժարանին մէջ: Գրասէր ներկաները հետաքրքրութեամբ հետևեցան «Բագին»ի խմբագիր Սոնիա Աճէմեան-Քիլիճեանի և խմբագրական խորհուրդի անդամներ Վարդան Մատթէոսեանի ու Վիգէն Թիֆէնքճեանի ելոյթներուն: Ձեռնարկը վարեց մասնաճիւղի անդամներէն Անի Փանոսեանը:

Դասախօսական երեկոյ՝ նուիրում հայրենի մեծանուն գրող Մուշեղ Գալշոյեանին (Լիբանան)



Համազգայինի Այնճարի «Պարոյր Սևակ» մասնաճյուղի մշակութային յանձնախումբի կազմակերպությամբ, Այնճարի «Ս. Զէյթեան» ժողովրդային տան «Մովսէս Տէր Գալուստեան» սրահին մէջ տեղի ունեցաւ դասախօսական երեկոյ մը՝ նուիրում հայրենի անուանի գրող Մուշեղ Գալշոյեանին: >>>

Դասախօսութիւն-քննարկում տեղեկատուական հարցերու մասին (Կիպրոս)



Ուրբաթ, 13 Հոկտեմբեր 2017-ին, կազմակերպութեամբ Համազգայինի Կիպրոսի «Օշական» մասնաճյուղի վարչութեան, Կիպրոսի Հայոց Առաջնորդարանի «Իւթիմեան» սրահին մէջ տեղի ունեցաւ դասախօսութիւն-քննարկում՝ հայկական տեղեկատուական խնդիրներուն մասին: Լիբանանէն յատկապէս հրաւիրուած էր «Ազդակ» օրաթերթի տնօրէն Շահան Գանտահարեան: >>>

«Յիշենք եթովպահայերը» խորագրով գրոյց-հանդիպում (Գանատա)



Համազգայինի Մոնթրէալի «Սանահին» մասնաճյուղի վարչութեան կազմակերպութեամբ, Չորեքշաբթի 21 Յունիս 2017-ին, Հայ Կեդրոնի «Ահարոնեան» սրահին մէջ տեղի ունեցաւ «Յիշենք եթովպահայերը» խորագրով գրոյց-հանդիպում մը, «In The Shadow of The Sultan» գիրքի հեղինակ՝ Ռուպինա Սվաճեանի հետ, յատկապէս հրաւիրուած Լոնտոնէն: >>>

«OPEN WOUNDS : Armenians, Turks and a Century of Genocide» գիրքի ներկայացում (Գանատա)



Չորեքշաբթի, 6 Սեպտեմբեր 2017-ին, Մոնթրէալի «Ահարոնեան» սրահէն ներս տեղի ունեցաւ «Open Wounds : Armenians, Turks and a Century of Genocide» գիրքի շնորհահանդէպը ներկայութեամբ մեծ թիւով գրասէր ու ազգասէր հայորդիներու, կազմակերպութեամբ Համազգային «Սանահին» մասնաճյուղի գրական յանձնախումբին և Շրջանային Հայ Դատի Յանձնախումբին կողմէ: >>>

«Նահապետի աշունը» յուշ-երեկոյ՝ նուիրում Ռուբէն Յովսէփեանի յիշատակին (Հայաստան)



25 Սեպտեմբեր 2017-ին, Կոմիտասի թանգարանին մէջ տեղի ունեցաւ «Նահապետի աշունը» խորագրով յուշ-երեկոյ՝ նուիրում անուանի գրող, թարգմանիչ, հրապարակախօս Ռուբէն Յովսէփեանի յիշատակին: >>>

«Մաշտոցէն Սևակ» (ԱՄՆ)



Համազգայինի Կլենտոնի մասնաճյուղի կազմակերպութեամբ 2017-ի Հոկտեմբերի 14-ին տեղի ունեցաւ «Մաշտոցէն Սևակ» բնաբանով Հայ մշակոյթի օրուան նուիրում երեկոն: >>>

Գրական երեկոյ (Քուէյթ)



Ուրբաթ, 15 Դեկտեմբեր 2017-ին, Համազգայինի Քուէյթի Մեկուսի կազմի գրական-դաստիարակչական յանձնախումբը կրկին ժամադրուած էր քուէյթահայ գրասէր հասարակութեան հետ, գրական ջերմիկ երեկոյի մը ընթացքին, որուն նիւթը այս անգամ 20-րդ դարու հայ մեծերէն՝ Եղիշէ Չարենցն էր, որուն ծննդեան 120 և եղերական մահուան 80-ամեակը կը լրանայ այս տարի: >>>

Արևելեան Ամերիկայի Համազգայինի «Մինաս և Գոհար Թէօլէօլեան» գրականութեան մրցանակի 2017թ. արդիւնքը (Քուէյթ)



Արևելեան Ամերիկայի Համազգայինի հայ կրթական և մշակութային միութեան Շրջանային վարչութիւնը կը տեղեկացնէ չորրորդ «Մինաս և Գոհար Թէօլէօլեան» Ժամանակակից գրականութեան մրցանակաբաշխութեան արդիւնքը: >>>

ՏԵՐԵՒԱԹԱՓ

Համազգայինի Կեդրոնական վարչութիւնը կը գոծէ իր նախկին անդամներէն Բաբգէն Սասունիի մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 30 Հոկտեմբեր 2017-ին:



«Ապակեայ կենդանիներ» թատերախաղի ներկայացում (Գանատա)



16-17 Սեպտեմբեր 2017-ին, Համազգայինի «Պետրոս Ադամեան» թատերախումբը Մոնթրեալի մեջ առաջին անգամ ըլլալով ներկայացուց Թենըսի Ուիլերմզի «Ապակեայ կենդանիներ» թատերախաղը, բեմադրությամբ Վիգեն Թիֆէնքճեանի, և խաղարկությամբ Ջեյմիտ Պոյաճեանի, Անանիա Եղիկեանի, Նարին Արգարեանի և Լևոն Արապեանի: >>>

Յուշ-երեկոյ՝ նուիրում բեմադրիչ և դերասան Սիմոն Մնակեանի (Լիբանան)



Կազմակերպությամբ Համազգայինի «Գասպար Իփեկեան» թատերախումբի վարչության, Ուրբաթ, 27 Հոկտեմբեր 2017-ին, Համազգայինի «Սիմոն Վրացեան» մասնաճիւղի սրահին մեջ տեղի ունեցաւ յուշ-երեկոյ՝ նուիրում բեմադրիչ և դերասան Սիմոն Մնակեանի: Ներկայ էր նաև Սիմոն Մնակեանի կինը՝ Սուսէ Մնակեան, որ այս առիթով յատուկ եկած էր Մարսելէն: >>>

Հենրիք Իբսէնի «Ժողովուրդի թշնամին» թատերախաղի ներկայացում (Լիբանան)



11-12 Նոյեմբեր 2017-ի շաբաթավերջին, Համազգայինի «Գասպար Իփեկեան» թատերախումբը «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մեջ երկու ելոյթներով ներկայացուց Լևոն Շանթի թարգմանությամբ Հենրիք Իբսէնի «Ժողովուրդի թշնամին» թատերախաղը՝ բեմադրությամբ Սուրէն Խտրշեանի: >>>

Յուշ-երեկոյ՝ նուիրում Ժորժ Սարգիսեանի մահուան 35-ամեակին (Լիբանան)



Հովանաւորությամբ Համազգայինի Կեդրոնական վարչության և գործակցությամբ Համազգայինի «Վահէ Մէթեան» հրատարակչատան ու «Գասպար Իփեկեան» թատերախումբի վարչության, Չորեքշաբթի, 27 Սեպտեմբեր 2017-ին «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մեջ տեղի ունեցաւ յատուկ ձեռնարկ մը, նուիրում՝ վաստակաւոր բեմադրիչ, դերուսոյց, թարգմանիչ և դերասան Ժորժ Սարգիսեանի մահուան 35-ամեակին: >>>

«Կռունկը Կը Կանչէ» թատերախաղի ներկայացում (ԱՄՆ)



Կիրակի, 5 Նոյեմբեր 2017-ին, Համազգայինի հովանաւորությամբ և Յուլակ Խաչերեանի բեմադրությամբ ներկայացուցաւ Ժագ Ս. Յակոբեանի «Կռունկը Կը Կանչէ» թատերախաղը, որ 70-ական թուականներէն սկսեալ ներկայացուած է բազմաթիւ անգամներ, երբ Համազգայինի «Գասպար Իփեկեան» թատերախումբը շրջած է Սփիւքի գանազան գաղութներ, և Ժորժ Սարգիսեանի բեմադրությամբ ներկայացուցած թատերգութիւնը: >>>

Պարէտ Մարոնեանի «1915-ի կիները» ժապաւէնի ցուցադրութիւն (Լիբանան)



Չորեքշաբթի, 25 Հոկտեմբեր 2017-ին, կազմակերպությամբ Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչության, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մեջ ցուցադրուեցաւ Պարէտ Մարոնեանի «1915-ի կիները» վաւերագրական ժապաւէնը: Շուրջ մէկուկէս ժամ հանդիսատեսը ժապաւէնին ընդմէջէն վերապրեցաւ Հայոց ցեղասպանութեան արհաւիրքը, մասնատրապէս հայ կնոջ ապրած տանջանքները, բայց նոյն ատեն նաև ոտքի կանգնելու վճռակամութիւնը, ապրելու և պայքարելու կամքը:

Ժապաւէնը անդրադարձաւ նաև այն մարդասէր օտար քոյրերուն, որոնք օգնութեան ձեռք երկարած են հայ ժողովուրդին, և ամէն գնով աշխատած պահելու, գուրգուրալու, և կրկին ոտքի հանելու հայ որբերը: >>>

«Վերջին Բնակիչը» ֆիլմի ցուցադրութիւն (Գանատա)



Երեքշաբթի, 14 Նոյեմբեր 2017-ին, Համազգայինի Մոնթրեալի «Սանահին ֆիլմի ակումբ»-ի կազմակերպությամբ, տեղի ունեցաւ հայրենի բեմադրիչ՝ Ջիւան Աւետիսեանի «Վերջին Բնակիչը» ֆիլմին ցուցադրութիւնը: Ցուցադրութեան ներկայ էր ֆիլմի բեմադրիչը: >>>

Կոմիտաս Վարդապետի նուիրում շաբաթ (Փարիզ)



13 Նոյեմբեր 2017-ին, Փարիզի Հայ Մշակոյթի տան մէջ, Համազգային հրաւիրած էր երաժիշտ և խմբավար Մկրտիչ Մկրտիչեանը, որ ներկայացուց Կոմիտասի կեանքն ու երաժշտական գործունէութիւնը, իսկ Կիրակի 19 նոյեմբերին, ցուցադրուեցաւ Վիգեն Չալտրանեանի «Վարդապետի լուսնիկները» ֆիլմը, բեմադրիչին ներկայությամբ: >>>

Համազգայինի «Քնար» պարախումբը իր տարեկան ելոյթով սոր ուստում մը արձանագրեց (Լիբանան)



1, 2, 7, 8 և 9 Յուլիսին, Էշրեֆիէի «Մննս» թատերասրահին մէջ Համազգայինի Լիբանանի Շրջանային վարչութեան «Քնար» պարախումբը հանրութեան ներկայացաւ իր տարեկան ելոյթով՝ պարուսոյց և գեղարուեստական ղեկավարներ ունենալով Կարէն և Ժաքլին Մակինեան ամուլը: >>>

Համազգայինի «Սարդարապատ» և «Շուշի» պարախումբերու ելոյթ (Սուրիա)



24 Սեպտեմբեր 2017-ին փունջ մը ասանդական ու ժամանակակից պարերով ելոյթ ունեցան Համազգայինի Սուրիոյ «Նիկոլ Աղբալեան» մասնաճիւղի «Սարդարապատ» և «Շուշի» պարախումբերը՝ գեղարուեստական ղեկավարութեամբ Գարմէն Էֆէեանի և Վրէժ Թերզեանի: >>>

«Սարերն ի վեր» (Գանատա)



24 և 25 Յունիս 2017-ին, Համազգայինի Թորոնթոյի «Գլաճոր» մասնաճիւղի Պարախումբի ուսումնարանի և Էրեբունի պարախումբի տարեկան ելոյթն էր «Սարերն ի վեր» խորագրով: Ելոյթը նուիրուած էր Գանատայի 150-ամեակին: >>>

Համազգայինը կը մասնակցի UNESCO-ի համագումարին (Յունաստան)



Յունաստանի Համազգային հայ կրթական և մշակութային միութեան Շրջանային վարչութիւնը, ընդառաջելով UNESCO-ի Պարի միջազգային խորհուրդի (CID - International Dance Council) հրաւերին, Ուրբաթ՝ 7 Յուլիս 2017-ի առաւօտեան ելոյթ մը ունեցաւ Փլաքայի Մշակութային Խորհուրդի «Պարի Տան» «Ալէրիտէս» սրահին ներս: >>>

Խաչատուրեանի «Գայեանէ» սերունդներու շաղկապը (Գանատա)



14 և 15 Հոկտեմբեր 2017-ին, Մոնթրէալի «Փիէր Մերքիւր» սրահին մէջ, հարսանիք կար: Հարսանիք՝ Գայեանէի և Արմէնի, հարսանիք հայ երաժշտութեան ու պարի, հայ մշակոյթի, հարսանիք՝ հայ սփիւռքի: Որպէս սովորական հանդիսատես, երբ մութ սրահին մէջ ներկայացման ժամանակ կը թրջուին աչքերդ, կը նշանակէ, թէ ինչ որ տեղ, տեսածդ ներքին թրթռացում մը յառաջացուցած է: Եւ արդէոք այս չէ՞ բոլոր արուեստներուն նպատակը: Մարդկային ուղեղներուն մէջ շարժել մտքեր, ազնուացնել հոգիներ: Այս իմաստով, Աշնանազարդ գիտլին այս պատկառութիւնը արժանատրապէս հասաւ իր նպատակին: >>>

Համազգայինի «Անի» պարախումբը մասնակցեցաւ Ֆոլքլոր Գանատայի համերգին (Գանատա)



Շաբաթ 4 Նոյեմբեր 2017-ին, Մոնթրէալի Գոլէժ Պրէպէօֆ թատերասրահին մէջ տեղի ունեցաւ Ֆոլքլոր Գանատայի կազմակերպած՝ «Spectacle Montréal Internationale 2017» պարային ելոյթը, գեղարուեստական ղեկավարութեամբ՝ Նաթալիա Շաթիլովայի: Վեց տարբեր մշակոյթներու կողքին՝ յայտագիրին իր մասնակցութիւնը բերաւ Համազգայինի «Անի» պարախումբը, գեղարուեստական ղեկավարութեամբ Եւա Հայրապետեանի: >>>

«Նայիրի» պարախումբին ելոյթը Ռոտտսի մէջ (Յունաստան)



Առաջին անգամ ըլլալով՝ Ռոտտս կղզիին մէջ, Շաբաթ՝ 2 Սեպտեմբեր 2017-ին, տեղի ունեցաւ Համազգայինի «Նայիրի» երկսեռ պարախումբի ելոյթը, որուն ներկայ գտնուեցան Յունաստանի Ռոտտս կղզիի քաղաքապետական, հարաւային Եզէականի մարզային իշխանութիւններու ներկայացուցիչներ, տեղական վարժարանային համակարգի ուսուցչական կազմեր և շատ մեծ թիով յոյն և օտար զբօսաշրջիկներ ու տեղացի ժողովուրդ: >>>

www.hamazkayin.com

ԳԵՂԱՐՈՒԵՍ

Վերաբացում՝ «Ռուբէն Նագեան» գեղարուեստի ակադեմիայի (Լիբանան)



Կազմակերպութեամբ Համազգայինի «Պարոյր Սևակ» մասնաճիւղին, Հինգշաբթի, 14 Սեպտեմբեր 2017-ին տեղի ունեցաւ Մուսա լեռան հերոսամարտի 102-ամեակի ձեռնարկներու առաջին նախաձեռնութիւնը՝ վերաբացումը «Ռուբէն Նագեան» գեղարուեստի ակադեմիային: >>>

Գեղանկարիչ Սևակ Արմէնեանի անհատական գործերու ցուցահանդէս (Լիբանան)



Հովանաւորութեամբ Սուրէն և Սոնիա Սարգիսեան ամուլին, Հինգշաբթի, 6 Յուլիս 2017-ին, Համազգայինի «Լիւսի Թիթիսնճեան» ցուցարահին մէջ տեղի ունեցաւ գեղանկարիչ Սևակ Արմէնեանի 41 իւղաներկ և 1 ջրաներկ գործերէ բաղկացած անհատական ցուցահանդէսին բացումը: >>>

Երգիծանկարիչ Տիրան Աճէմեանի ալպոմի շնորհահանդէս (Լիբանան)



Կազմակերպութեամբ Համազգայինի «Լիւսի Թիթիսնճեան» ցուցարահին, Ուրբաթ, 15 Դեկտեմբեր 2017-ին տեղի ունեցաւ երգիծանկարիչ Տիրան Աճէմեանի ալպոմի շնորհահանդէսը: >>>

Համազգայինի «Լիւսի Թիթիսնճեան» ցուցարահի մասնակցութիւնը «Պէրոյր Արթ Ֆեր»-ին (Լիբանան)



21 Սեպտեմբեր 2017-ին, «Պիեղ»-ի մէջ տեղի ունեցաւ այս տարուան «Պէրոյր Արթ Ֆեր» ցուցահանդէսին բացումը: Այս տարի ցուցահանդէսին մասնակցեցան 23 երկիրներէ 51 ցուցարահներ և մեծ թիւով արուեստագէտներ: Համազգայինի «Լիւսի Թիթիսնճեան» ցուցարահը 5-րդ տարին ըլլալով մասնակցեցաւ «Պէրոյր Արթ Ֆեր»-ին և ներկայացուց Միսաք Թերզեանի, Կիլէն Տէր Պօղոսեանի, Ռիթա Հասունիի, Ղասսան Օուէյսի և Մարալ Տէր Պօղոսեանի գործերը: >>>

Քանդակագործ Թորոսի ցուցահանդէսը ԻՆՆԷՍՔՕ-ի յարկին տակ (Փարիզ)



28 Նոյեմբերի միջօրէին, ԻՆՆԷՍՔՕ-ի «Սէկիւր» սրահին մէջ բացումը կատարուեցաւ հայ մեծանուն արուեստագէտ Թորոսի (Թորոս Ռասթելեմեան) 26 քանդակներու չորսօրեայ ցուցահանդէսին: Առաջին անգամն էր, որ միջազգային մշակութային այդ կեդրոնին մէջ վարպետը կը ցուցադրէր իր գործերը՝ «La paix: Toros oeuvre integrale» խորագրին տակ, արձանագրուած՝ ԻՆՆԷՍՔՕ-ի կողմէ մշակութային արժէքներու պահպանութեան ու զարգացման շրջանակին մէջ: Նոյն այդ սրահին մէջ գետեղուած է Ալպերթօ Ճիաքոմեթիի նշանաւոր պրոնզէ քանդակը՝ «Բալող մարդը» (l'Homme qui marche): >>>

Հայաստանի երիտասարդ արուեստագէտներու «Ես եմ» ցուցահանդէսի բացում (Լիբանան)



Կազմակերպութեամբ Համազգայինի «Լիւսի Թիթիսնճեան» ցուցարահին և հովանաւորութեամբ ներքին գործոց և քաղաքապետութիւններու հարցերու նախարար Նուհատ Մաշտուքի, Հինգշաբթի, 26 Հոկտեմբեր 2017-ին տեղի ունեցաւ Հայաստանի երիտասարդ արուեստագէտներու «Ես եմ» ցուցահանդէսի բացման հանդիսութիւնը՝ «Լիւսի Թիթիսնճեան» ցուցարահին մէջ: >>>

«Շուշի. 48 Ժամ» եռալեզու պատկերագիրքին շնորհահանդէսը (Արցախ)



11 Սեպտեմբեր 2017-ին Շուշիի Կերպարուեստի պետական թանգարանին մէջ տեղի ունեցաւ «Շուշի. 48 Ժամ» եռալեզու պատկերագիրքին շնորհահանդէսը: Համազգայինի հայ կրթական և մշակութային միութեան Կեդրոնական վարչութեան անդամ Սպարտակ Ղարաբաղեան յայտնեց, որ գիրքը հրատարակուած է Յունիս 2017-ին և լոյսին եկած է Համազգայինի լուսանկարչական նախագիծին շնորհիւ, որ նուիրուած էր Շուշիի ազատագրման 25-ամեակին: >>>

ԵՐԳ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Սիրուշոյի պատմական համերգը Մոնթրէալի մէջ (Գանատա)



Մոնթրէալի մէջ Սիրուշոյի առաջին մենահամերգը տեղի ունեցաւ Ուրբաթ, 7 Յուլիսին, College Laval-ի «Marcelin Champagnat» սրահին մէջ: Ձեռնարկը կազմակերպուած էր Համազգայինի «Սանահին» մասնաճիւղի վարչութեան կողմէ: Նախքան համերգի թուականը, իրենց կեցութեան երեք օրերուն ընթացքին, արուեստագէտն ու իր անձնակազմը առիթը ունեցան փորձեր կատարելու Համազգայինի Ասի գոյգ պարախումբերուն և «Քնար» երգչախումբին հետ, որոնք արդէն ամիսներէ ի վեր կը պատրաստուէին

համերգի մասնակցութեան, հիմնուելով Սիրուշոյի տեսահոլովակներուն վրայ, և հետևելով իրենց ղեկավարներու ցուցմունքներուն: >>>

ՀՀ Հանրային ռատիոյի Մայեաթ-Նովա աշուղական վաստակաւոր անսամպլը Միտնիի մէջ (Աւստրալիա)



22 Սեպտեմբեր 2017-ին, Չալոուտի Քոնքորս սրահին մէջ, մտաւորապէս 800 հանդիսատեսներ հաւաքուած էին վայելելու «Մայեաթ Նովա Աշուղական Անսամպլը»-ի երաժիշտներն ու գեղարուեստական ղեկավար Թովմաս

Պօղոսեանին կատարումները: Վարպետը ներկայացուց նուագախումբի անդամները և անոնց հայկական նուագարանները: Անոնց երգերուն առնչութեամբ, իր իւրայատուկ կատարումներով Համազգայինի Նայիրի պարախումբը ներկայացուց «Ես Իմ Անուշ Հայաստանի» և «Կիլիկիա» պարերը, իսկ Միտնի Պարի Անսամպլը՝ «Կենաց Ծառ» և «Մայեաթ Նովա» պարերը: >>>

Համազգայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլեճի ամառային հանդէս և վկայականաց բաշխում (Լիբանան)



Համագայինի «Բարսեղ Կանաչեան» երաժշտական քոլեճի 2016-2017 կրթական տարեշրջանի ամավերջի հանդեսն ու վկայականաց բաշխման հանդիսությունը տեղի ունեցաւ Ուրբաթ, 30 Յունիս 2017-ին: >>>

Հայկական հոգևոր և ժողովրդային երգերու երեկոյ՝ Համագայինի «Գուսան» սենեկային երգչախումբին կատարողութեամբ (Լիբանան)



Հովանաւորութեամբ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Շահէ եպս. Փանոսեանի և կազմակերպութեամբ Համագայինի Լիբանանի Շրջանային վարչութեան, Երկուշաբթի, 3 Յուլիս 2017-ին, Սրբոց Վարդանանց եկեղեցոյ մէջ ելոյթ ունեցաւ «Գուսան» սենեկային երգչախումբը՝ խմբավարութեամբ Գրիգոր Արզեանի, դաշնակի ընկերակցութեամբ Յասմիկ Գասպարեանի: >>>

Համագայինի «Հայ աստղեր» մանկապատանեկան երգչախումբի ոգևորիչ ելոյթը (Գանատա)



Հայ երգը հայ պահելու յանդուգն ու ազգօգուտ քայլ էր Համագայինի Թորոնթոյի «Հայ աստղեր» մանկապատանեկան երգչախումբին յառաջացումը, եօթը տարիներ առաջ. այսօր, յիսունէ աւելի իր անդամներուն՝ չորս տարեկան մանուկէն մինչ երիտասարդութեան դռները հասած պատանիին կողմէ մեղեդիի պէս հնչող բիւրեղ հայ երգը օտարամոլութեան դէմ ծառայող մեծագոյն ազդակներէն է: >>>

Պոլսահայ երգչուհի Միայիլ գերեց Լոս Անճելըսահայութիւնը



Կիրակի, 22 Հոկտեմբեր 2017-ին, Լոս Անճելըսի «Ուիլշըր Իպէլ» ընդարձակ թատերասրահը 90 տոկոսով լեցուն էր որակաւոր հայ և ոչ-հայ արուեստասէրներով, որոնք հոն ժամանած էին լսելու համար հոշակաւոր գոյգը՝ պոլսահայ երգչուհի Միայիլը և հայազգի

երգիչ Անտրէն: Ձեռնարկը կազմակերպուած էր Համագայինի և Պոլսահայ միութեան միացեալ ճիգերով: >>>

Վարդան Պատալեան և «Շերամ» համոյթը հոգեկան բերկրանքի պահեր պարգևեցին լիբանանահայ արուեստասէր հասարակութեան



Ուրբաթ, 3 Նոյեմբեր 2017-ի երեկոյեան «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասրահին մէջ լիբանանահայ արուեստասէր հասարակութիւնը անխառն զգացումներով ներկայ գտնուեցաւ աշուղական երգերու մենահամերգի՝ կատարողութեամբ հայրենի աշուղական երգերու մեկնաբան Վարդան Պատալեանի: Համերգին յաւելեալ փայլք տուաւ հայկական ժողովրդային նուագարաններու «Շերամ» համոյթը: Ելոյթին հովանաւորն էր Համագայինի Լիբանանի Շրջանային վարչութիւնը, իսկ կազմակերպողն էր Համագայինի «Քնար» պարախումբի վարչութիւնը: >>>

ՇՐՋԱՆՆԵՐ

Համագայինի Արևելեան Ա.Մ.Ն.-ի Շրջանային Վարչութեան վերամուտի պատրաստութիւնները



5 Օգոստոս 2017-ին, Նիւ Եորքի մէջ, «Համագային»ի Արևելեան Ա.Մ.Ն.-ի Շրջանային Վարչութիւնը կատարեց լիազումար նիստ մը, որուն կարևորագոյն օրակարգը, վերամուտի և յառաջիկայ տարեշրջանի վերաբերեալ պատրաստութիւններն էին: >>>

Գորգագործութեան դասընթացք Սան Ֆրանսիսքոյի մէջ



Նախաձեռնութեամբ Սան Ֆրանսիսքոյի Համագայինի «Ն. Աղբալեան» մասնաճիւղի «Նոր Սերունդ» երիտասարդական յանձնախումբին, Կիրակի, 22 Հոկտեմբեր 2017-ին տեղի ունեցաւ գորգագործութեան արուեստի դասընթացք մը՝ «Ջուլիակի Գորգ» անունով: >>>

Լոնտոնի Համագայինի հաւաք



29 Հոկտեմբեր 2017-ին տեղի ունեցաւ Լոնտոնի Համագայինի հաւաքը՝ ընդհանուր ժողովի պատրաստութեան և նոր անդամագրութեան նպատակով: >>>

«Մերօրեայ հերոսները» տարեվերջեան հանդիպում Համագայինի Հայաստանի գրասենեակում (Հայաստան)



Համագայինի Հայաստանի գրասենեակի տարեմուտի ակումբային հաւաքը Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի ուսանողների և դասախօսական կազմի հետ էր: Ուսանողների շարքում մերօրեայ հերոսներն էին՝ Ապրիլեան պատերազմի մասնակից զինուոր-տղաներ, տարբեր միջազգային առաջնութիւններում Հայաստանի պատիւը բարձր պահող մարզիկներ, ապագայ լրագրողներ: Հանդիպմանը ներկայ էին Համագայինի Կեդրոնական Վարչութեան անդամներ Կարօ Պայթարեանը և Սպարտակ Ղարաբաղեանը, լուսանկարիչ-վաւերագրող Գերման Աւագեանը և մամուլի ներկայացուցիչներ: >>>

Համագայինի Կիպրոսի «Օշական» մասնաճիւղի հերթական մշակութային երեկոն (Կիպրոս)



Ամառուան երկար դադարէ մը ետք, որուն ընթացքին հիմնական վերանորոգման ենթարկուեցաւ մեր ակումբը, 15 Նոյեմբեր 2017-ին տեղի ունեցաւ Համագայինի 2017-18 տարեշրջանի Բ. Մշակութային երեկոն: >>>

Համագայինը Ալֆորվիլի մէջ՝ Մշակութային Տան հրաւերով (Ֆրանսա)



23 Նոյեմբեր 2017-էն՝ մինչև 26 Նոյեմբեր օրերուն Ալֆորվիլի (Փարիզ, Ֆրանսա) քաղաքապետութեան Մշակութային Բնեռի (Pôle Culturel-POC) ընդարձակ սրահներէն մէկուն մէջ տեղի ունեցաւ քաղաքի Հայկական մշակութային տան (MCA) կողմէ տասնամեակէ մը ի վեր տարեկան յաճախականութեամբ տեղի ունեցող՝ Armen'Livres (Արմէն Գիրքեր) անունը կրող ձեռնարկը: Իրաքանչիւր ձեռնարկին իբրև պատուոյ հիւր կը հրաւիրուի միութիւն մը կամ անհատ մը: Այս տարուան հիւրը Համագայինն էր: >>>

Համագայինի նոր մասնաճիւղ Վանգուվըրի մէջ (Գանատա)

Դեկտեմբեր ամսուան ընթացքին, Համագայինի Գանատայի շրջանը համալրուեցաւ չորրորդ մասնաճիւղով մը: Վանգուվըրի համագայնականները միատեղուելով հիմը դրին տեղույն «Վարագ» մասնաճիւղին և ընտրեցին եօթնադամ անդրանիկ վարչութիւնը, որ կը ծրագրէ աշխոյժ գործունէութիւն ծաւալել Վանգուվըրի հայութեան կեանքին մէջ: